կըրպագութիւն ընելէ, վասնզի քահանայ էր և իր ձեռաց մէջ կը կրէր զԱստուած։ Երբ հասաւ Մարիամ, երկուքը միասին աղօթեցին և սրբուհին անբացատրելի բարեպաշտութեամբ և արտասուաթուրմ աչքերով Զոսիմոսի ձեռքով հաղորդուեցաւ։ Յետոյ, աչքերը վեր բարձրացնելով և ձայնը՝ դէպի յերկինս, ան արտասանեց Սիմէոն Ծերունիին խօսքերը «Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո» (E. F. B. էջ 324)։

և) Յովհաննէս վրդ. Գառնեցի Յորդանանի մէջ(*). — «Այսմ վկայ պատմեմ քեզ զոր լուայ ի Գառնեցի միակեցէն ի Յովանիսէն, թէ ի թուականութեանն ի Ռ և ՀԱ, (= 1222) կայի ես ի սուրբն Երուսաղէմ, և գնացեալ էաք ի Յորդանան ի տաւն յայտնութեանն Տեառն. և մինչ կայի ես մեկուսի յաղաւթս, եկն առ իս մուղրի (ղուրան կարդացող) մի երկու որդաւք, և խնդրէր յինէն մկրտութիւն, թարգմանաւ միով ընդ իւր։ Եւ ասեմ ցնա, ո՞վ ես դու, և յինչ պատճառս մկրտիս եւ լինիս քրիստոնեայ. եւ ասէ, Այո՛ լինիմ քրիստոնեայ և թէ ուզես և զպատճառն կամիս իմանալ, նիստ եւ լուր։ Եւ մինչ նստաք, ասէ, ես ի պարսից եմ գաւառաւ և ազգաւ. և ի քաղաքէն որ

(*) Միաբան Այրի Վանաց, 1222ին իբր ուխտաւոր կուգայ Երուսաղէմ. միեւնոյն ժամանակ 40 հայերու հետ կ'այցելէ Յորդանան եւ Սինէական անապատը։ Գառնեցին Երուսաղէմէն կը մեկնի Հռոմկլայ, Կոստանդին կաթողիկոսի մօտ, ուր կը վախճանի։ Իր **Տեսիլներուն** եւ **հրաշից** պատմութիւնները գրի առած է **Կիրակոս պատմիչ** (էջ 209–214), ինչպէս կը յիշէ նաեւ Ս. Յակոբայ մատենադարանին թ. 1084 ձեռագիրը։